

*Ապարանի  
Օրհուս բնապահպանական տեղեկատվության  
հասարակական կենտրոն*

**ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**



**Հունվար - Դեկտեմբեր  
2012թ.**

### Կենտրոնի գործունեության ամփոփ նկարագիրը

Հաշվետու ժամանակաշրջանում (2012թ. հունվար-դեկտեմբեր) կենտրոնի նախաձեռնությամբ և աջակցությամբ անցկացվել են ավելի քան 4 տասնյակ միջոցառումներ՝ սեմինար - դասընթացներ, հանդիպումներ, մրցույթ, ծառատունկ, սանիտարական մաքրման աշխատանքներ, փորձագետների խորհրդի նիստ, քննարկումներ և այլն: Կենտրոնը տրամադրել է տարաբնույթ խորհրդատվություն, կազմակերպել է հանդիպումներ հիմնարկությունների, ուսումնական հաստատությունների, ՏԻՄ-երի ներկայացուցիչների, երիտասարդների հետ:

Ստորև, Աղյուսակ I – ում ներկայացված է կենտրոնի միջոցառումների քանակը, տեսակները:

Աղյուսակ I	
2012թ հունվար - դեկտեմբեր ամիսների կենտրոնի միջոցառումների ընդհանուր քանակը	
Միջոցառման անվանում	Քանակը
Այցելություններ և աշխատանք. հանդիպումներ	25
Հասարակական քննարկումներ Կլոր սեղան-քննարկումներ	5
Սեմինարներ Դասընթացներ	12
Մրցույթներ,	1
Ծառատունկ - Շաբաթօրյակներ	2
Փորձագետների Խորհրդի նիստեր	1
Մոնիթորինգ	1
Հանդիպում ՋԼՄ հետ	3
Ընդամենը՝	49 միջոցառում


Կենտրոնի համակարգողը մասնակցել է այլ կազմակերպությունների՝ բնապահպանական խնդիրների վերաբերող միջոցառումների: Կենտրոնը համագործակցել է մի շարք ՀԿ-ների և այլ կազմակերպությունների հետ:




Հաշվետու ժամանակահատվածում կենտրոն են այցելել **883 մարդ**, կենտրոնի ծառայություններից ( գրադարան, ֆիլմոդարան, պատճենահանում, ) օգտվել են ևս **170 մարդ**, /հիմնականում ուսուցիչներ, ուսանողներ, դպրոցականներ /:

Այցելուների ընդհանուր թիվը 2012թ. հաշվետու տարում կազմել է **1053 մարդ**, Ապարանի բնակչության **15 %-ը**:

Աղյուսակ II- ում ներկայացված է կենտրոնի այցելուների , կենտրոնի ծառայություններից օգտվողների թիվը և նրանց բաժինը Ապարանի բնակչության ընդհանուր թվում.



Նախորդ տարիների համեմատ 2012թ-ին ավելացել է կենտրոնի այցելուների թիվը, սակայն որոշ չափով նվազել է կենտրոնի ծառայություններից օգտվողների թիվը, ինչը պայմանավորված է Ապարան քաղաքում ինտերնետ կապից օգտվողների թվի ավելացմամբ:



Աղյուսակ III- ից երևում է, որ կենտրոնի միջոցառումների մասնակիցների և այցելուների մեծամասնությունը կազմում են պատանիներն և աշակերտները՝ 40% : Հասարակայնության ներկայացուցիչները կազմում են կենտրոնի այցելուների 31% , երիտասարդներն ու ուսանողները՝ 15%: ՏԻՄ-երի ներկայացուցիչներն մասնակցությամբ երրորդն են: Հասարակության մյուս խմբերի տոկոսային բաժինը 1% է և ավելի ցածր:

Աղյուսակ III			
Կենտրոնի միջոցառումների մասնակիցների և ծառայություններից օգտվողների թիվն ըստ ոլորտների:			
	2012		2011
ԴԿ ներկայացուցիչներ	10	1%	2%
երիտասարդներ (ուսանողներ )	154	15%	13%
Պատանիներ, աշակերտներ	424	40%	44%
ԶԼՍ ներկայացուցիչներ	8	0,5%	-
ՏԻՄ	112	11%	8%
Այլ պետական կառույցներ	15	0,5%	3%
Բիզնես սեկտորի ներկայացուցիչներ		1%	1%
Հասարակայնության ներկայացուցիչներ	330	31%	29%
Ընդամենը՝	1053	100%	100%



**Աղյուսակ IV - ում** ներկայացված են կենտրոնի ծառայություններից օգտվողների թիվը, որը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 170 մարդ:  
 Կենտրոնի ծառայություններից օգտվողների հիմնական մասը ուսուցիչներ են, ուսանողներ և դպրոցականներ (Ֆիլմոդարան, պատճենահանում, խորհրդատվություն):

Աղյուսակ IV Կենտրոնի ծառայություններից օգտվել են 170 քաղաքացի					
month	գրադարան	ֆիլմոդարան	ինտերնետ	Պատճենահան.	Խորհրդատվութ.
Հունվար	2	6		2	2
փետրվար	4	4		6	2
Մարտ	1	3		1	
Ապրիլ	2	4		5	1
Մայիս		3		6	4
Հունիս	3	4		6	3
Հուլիս	2			5	
Օգոստոս	5	3		15	
Սեպտեմբեր	4	5		10	1
Հոկտեմբեր	3	2			10
Նոյեմբեր	3			10	13
Դեկտեմբեր		2			
<b>Ընդամենը՝ 170</b>	<b>27</b>	<b>35</b>		<b>73</b>	<b>35</b>

Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնը համագործակցել է տեղական իշխանությունների, հասարակայնության ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների հետ; Կենտրոնի գործունեության մասին տեղյակ են ինչպես մարզային, այնպես էլ մարզից դուրս գտնվող մի շարք կազմակերպություններ, որոնց հետ կենտրոնը համագործակցում է մարզի բնապահպանական խնդիրների լուծման ուղղությամբ:

Դրանց շարքին է պատկանում Հայ – ամերիկյան համալսարանը, որը մարզում, Օրհուս կենտրոնի աջակցությանը մի քանի ծրագրեր է իրականացրել (Մոնիթորինգ՝ հողի, ջրի նմուշառումներ Քուչակի ժամկետանց պեստիցիդների պահեստի և Մելիքբյուրի <<Թուխմանուկի >> ոսկու հանքավայրի պոչամբարի տարածքներում):

Հաշվետու տարում Ապարանի Օրհուս կենտրոնի աշխատանքային գործունեության հիմնական ուղղությունները համայնքի գուղատնտեսության ոլորտն էր / օրգանական գյուղատնտեսություն/, թափոնների կառավարման /աղբահանության/, ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման / Քասաղի ջրի մոնիթորինգ/ խնդիրները, ինչպես նաև աջակցությունը հանքարդյունաբերության առաջացրած բնապահպանական խնդիրների լուծմանը: Կենտրոնի գործունեության կարևորագույն ուղղությունը եղել և մնում է էկոլոգիայի, էկոդաստիարակությունը / իրազեկման միջոցառումներ, մրցույթներ, ծառատունկ, տարածքի մաքրում և այլն/:

Վերը նշված ուղղություններով կենտրոնում կազմակերպվել են սեմինարներ, դասընթացներ, քննարկումներ: Տրամադրվել է տեղեկատվություն, տրվել՝ խորհրդատվություն;

Օրհուս կենտրոնն են դիմել մարզի Թալինի տարածաշրջանի Մուսերի համայնքային ակտիվ խումբը/ՀԱԽ/, որն իրականացնում է համայնքի աղբահանության ծրագրի, որի շրջանակում Ապարանի Օրհուս կենտրոնը հրավիրվել է Մուսեր համայնք <<Պլաստիկ շշերի և ցեֆանե տոպրակների թափոնների վնասակար հետևանքների և նրանց երկրորդային օգտագործման հնարավորությունները>> թեմայով մի քանի դասընթաց անցկացնելու դպրոցականների և ուսուցիչների համար:

Գաղտնիք չէ, որ բնապահպանական խնդիրները , տեղեկատվությունը դրանց վերաբերյալ շատ ավելի լավ է ներկայացված համացանցում, սակայն բնակչության շրջանում դեռևս ցածր է համակարգչային գրագիտության մակարդակը, համացանցից օգտվելու կարողությունները: Համացանցի սոցիալական խմբերում ներգրավվելու, քննարկումներին մասնակցելու նպատակով Օրհուս կենտրոնում անցկացվել է դասընթացների շարք ուղղված բնակչության շրջանում համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացմանը: / Դասընթացավար՝ Խաղաղության Կորպուսի կամավոր / :

Կենտրոնի կոցմից տեղեկետվություն ստանալու հարցումներ են ուղղվել Բնապահպանության, Արտակարգ իրավիճակների նախարարություններ կապված Թուխմանուկի ոսկու հանքավայրի նոր պոչամբարի կառուցման հետ:

Կազմակերպվել են այցելություններ Մելիքյուղի ոսկու հանքավայր, հանդիպումներ են տեղի ունեցել բնակիչների, համայնքի ղեկավարների հետ, քննարկվել հանքավայրի շահագործման հետևանքով առաջացած խնդիրները, որոնք լուսաբանվել են <<Կենտրոն>> , <<ԱՐ >> հեռուստաալիքներով: Տարվա ընթացքում բազմաթիվ հանդիպումներ են եղել համայնքի ղեկավարության, ՏԻՄ ներկայացուցիչների հետ, քննարկվել են համայնքի բնապահպանական խնդիրները ու դրանց լուծման ուղիները /աղբահանություն, ջրային ռեսուրսների աղտոտում, մարգագետինների պահպանություն, կանաչապատում և այլն/:

Կենտրոնում անցկացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը մշտապես տարածվում է [www.aarhus.am](http://www.aarhus.am) , [Facebook.com](https://www.facebook.com/aarhus.am) , [www.aparan.am](http://www.aparan.am) և այլ կայքերի, լրատվական թերթիկների միջոցով:

Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝  
Նատալիա Մանուկյան  
Հեռ. 374 94/ 22-49-26  
0252 6-23-60  
E-mail: [Info\\_aparan@aarhus.am](mailto:Info_aparan@aarhus.am)  
[aarhusaparan@mail.ru](mailto:aarhusaparan@mail.ru)

